

***Տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստը***

**20.05.2014**

Այսօր ՀՀ Արմավիրի մարզպետարանում տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Լարիսա Մուրադյանը:

Օրակարգում ընդգրկված հարցը վերաբերում էր Արմավիրի զբաղվածության մարզային կենտրոնի բնակչության զբաղվածության կարգավորման 2014 թվականի պետական ծրագրերին և դրանց շրջանակներում նախատեսվող միջոցառումներին:

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, Լ. Մուրադյանը ներկայացրեց նորաստեղծ <<Արևի շող>> հասարակական կազմակերպությունը, որը զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով:

Զբաղվածության ծառայության գործակալության Արմավիրի տարածքային կենտրոնի տնօրեն Վարազդատ Ասատրյանը մանրամասն ներկայացրեց նախատեսվող ծրագրերը՝ միաժամանակ առաջարկելով համայնքների ղեկավարների օգնությամբ իրազեկել տվյալ համայնքի հաշմանդամներին՝ դիմել զբաղվածության տարածքային կենտրոններ՝ հաշվառվելու և համապատասխան ծրագրերում ընդգրկվելու համար:

Ամփոփելով նիստը, Լ. Մուրադյանը կարևորեց կողմերի միջև փոխգործակցությունը՝ հաջողություններ մաղթելով հետագա բոլոր գործերում: